h.1601787
13-08-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Երևանի քաղաքապետարան*

Դիմող՝ *ԷԴԳԱՐ ՂԱՉԱՐՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

ԴԻՄՈՒՄ

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկում

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ, տեղեկացնում եմ, որ 2025 թվականի օգոստոսի 23-ին, 24-ին, 25-ին, 26-ին, 27-ին, 28-ին, 29-ին, 30-ին, 31-ին, սեպտեմբերի 1-ին, 2-ին, 3-ին, 4-ին, 5-ին, 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին, 10-ին, 11-ին, 12-ին 13-ին, 14-ին, 15-ին, 16-ին, 17-ին, 18-ին, 19-ին, 20-ին և 21-ին ժամը 10:00-ից մինչև 22:00 մեր նախաձեռնությամբ անցկացվելու են հանրային հավաքներ։

1. Հանրային հավաքները նախատեսվում են անցկացնել Երևան քաղաքի Բաղրամյան 19 հասցեում, Ազգային ժողովի գլխավոր մուտքի դարպասների մոտ։
2. Հավաքները նախատեսվում են մեկնարկել նշված օրերին ժամը 10:00-ից և ավարտել մինչև 22:00։
3. Հավաքների նպատակն է պահանջել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից անվստահություն հայտնել ՀՀ վարչապետին։
4. Հավաքներին նախատեսվում է մոտավորապես 3.000 մարդու մասնակցություն։ Մասնակիցների մասին հնարավոր առավել ստույգ կլինի կանխատեսումներ անել հավաքից մի քանի օր առաջ՝ սպասվող հանրային արձագանքներից ելնելով։
5. Հավաքներին հնարավոր է օգտագործել ստացիոնար կամ շարժական բեմահարթակ (ավտոմեքենայի վրա հարմարեցված), բարձրախոսներ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական դրոշներ, հնարավոր են պաստառներ և այլն։
6. Հավաքներում կարգադրիչների մասնակցություն չի նախատեսվում։
7. Հավաքների ընթացքում հնարավոր են անցկացվի երթեր՝ Բաղրամյան պողոտա – Դեմիրճյան փողոց - Բաղրամյան պողոտա երթուղով (երթերի

անցկացման ժամկետների մասին կտեղեկացվի Ոստիկանության ներկայացուցիչներին)։

8. Հանրային հավաքների կազմակերպիչն ու ղեկավարն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդգար Ֆերդինանդի Ղազարյանը

Խնդրում ենք օպերատիվ կարգով, բջջային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրել տվյալներ Երևանի քաղաքապետարանի այն պաշտոնատար անձի մասին (անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, բջջային և աշխատանքային հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոսի հասցե), որի հետ հնարավոր կլինի հետագայում օպերատիվ կապ պահպանել՝ նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում։

Էդգար Ղազարյան

Հայաստանի Հանրապետության քաղաքացի

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ